30 հուլիսի 2020 թվականի N 1252 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N 1085-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի «Պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային կազմի զինծառայողների (ներառյալ ծառայության ընթացքում կրտսեր ենթասպայական կազմի զինվորական կոչում ստացած և պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր չկնքած զինծառայողների), Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած շարքային կազմի պարտադիր զինծառայողների, ինչպես նաև ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների և սովորողների դրամական ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1085-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի՝

ա. 2-րդ ենթակետում «և ուսումնառության կուրսերի» բառերը փոխարինել «, ուսումնառության կուրսերի և առաջադիմության» բառերով.

բ. 3-րդ ենթակետը «երկրների» բառից հետո լրացնել «և առաջադիմության» բառերով.

2) որոշման N 2 հավելվածում՝

ա. 3-րդ և 4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետության ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դրամական ապահովությունը, ըստ շնորհված զինվորական կոչումների, ուսումնառության տարիների և առաջադիմության, սահմանվում է՝

(դրամ)

«

NN ը/կ	Ամսական չափերը						
	ըստ կուրսանտին շնորհված զինվորական կոչման	ըստ ուսումնառության տարիների					ըստ առաջադիմության (5-րդ կետի պայմանն ապահովելու դեպքում)
		1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	5-րդ տարի	
1.	ավագ	27 100	28 300	29 500	30 700	31 900	10 000
2.	ավագ սերժանտ	23 200	24 400	25 600	26 800	28 000	10 000
3.	սերժանտ	19 400	20 600	21 800	23 000	24 200	10 000
4.	կրտսեր սերժանտ	15 500	16 700	17 900	19 100	20 300	10 000
5.	եֆրեյտոր	11 600	12 800	14 000	15 200	16 400	10 000
6.	շարքային	5 300	7 100	9 500	11 300	13 100	10 000

»:

4. Օտարերկրյա պետությունների ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դրամական ապահովությունը, ըստ ուսումնառության երկրների և առաջադիմության, սահմանվում է՝

(դրամ)

«

Ամսական չափերը		
ըստ ուսումնառության երկրների		ըստ առաջադիմության (5-րդ կետի պայմանն ապահովելու դեպքում)
Ռուսաստանի Դաշնություն	այլ օտարերկրյա պետություններ	
10 000	100 000	10 000

»,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետով.

«5. Առաջադիմության համար դրամական ապահովությունը հաշվարկվում է կիսամյակային և (կամ) հաջորդ կուրս փոխադրվելու գնահատման արդյունքներով՝ կուրսանտի միջին որակական գնահատականը (ՄՈԳ) ռազմաուսումնական հաստատությունում սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի

առնվազն 80 տոկոսը կազմելու դեպքում: Առաջադիմության համար դրամական ապահովությունը հաշվարկվում է գնահատված կիսամյակին և (կամ) հաջորդ կուրս փոխադրվելու քննություններին հաջորդող կիսամյակի ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. հուլիսի
Երևան